ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Տեղական ինքնակառավարման մարմինների հարգելի՛ գործընկերներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 28-ամյակի առթիվ:

Բարձր գնահատականի են արժանի ՏԻՄ այն ներկայացուցիչները, որոնք համայնքի բնակչի առջև բարձր պատասխանատվության գիտակցումով լծվել են հայրենիքի ու իրենց համայնքի շենացման գործին:
Մենք բոլորս ունենք մեկ առաքելություն. համայնքի բնակիչների համար ապահովել բարեկեցիկ և զարգացող միջավայր:

Հարգելի գործընկերներ,

Բոլորիս մոտ պետք է գերակայի այն սկզբունքը, որ մեր աշխատանքի արդյունավետության գլխավոր գրավականը հանրության ակտիվ մասնակցությունն է որոշումների կայացման և իրականացման գործընթացում:
Կոչ եմ անում մեծագույն համբերատարությամբ մշտապես լինել բնակչի կողքին, ականջալուր լինել նրա խնդրին՝ այդ կերպ ամրապնդելով առկա ձեռքբերումներն ու էլ ավելի զարգացնելով ՏԻՄ համակարգը:

Մեկ անգամ ևս շնորհավորելով մասնագիտական տոնի առթիվ, բոլորիդ մաղթում եմ անձնական և աշխատանքային նորանոր հաջողություններ: Վստահ եմ, որ նույն նվիրումով ու պատասխանատվությամբ շարունակելու եք աշխատել՝ նպաստելով թե՛ համակարգի կատարելագործմանը, թե՛ մեր բնակիչների հոգսերի թեթևացմանը և թե՛ մեր պետության կայուն զարգացմանը:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**